տոների նման տեղի էր ունենում ուխտագնացություն հարևան խաչերը, սակայն կային առանձնապես այդ օրն այցելվող սրբավայրեր։ Այսպես էր, օրինակ, Լոր գյուղի մոտ Մառու սրփ Օհանէսը։ Արծվանիկցիք, խնձորեսկցիք և այլ հեռու և մոտիկ գյուղերի բնակիչները գերադասում էին Խդրանց գյուղի Զօրէիդոնի խաչը, որտեղ երկու շենքերում աղոթելուց և շամէր՝ մոմեր վառելուց հետո ներկա էին գտնվում պատարագին։ Ապա նստում էին աղբյուրի մոտ ծառերի տակ մի ընդհանուր սեղանի՝ իրար հետ խառնելով բերած կերակուրները։ Այդտեղ գալիս էին հատկապես այդ եկեղեցու մոտ բխող աղբյուրի ջրից[50] տուն տանելու համար։ Հավատում էին, որ այդ ջուրը պահպանում էր ամեն տեսակի հիվանդություններից, արտերը՝ մորեխից, մկներից և կարմիր ժանգից և զորավոր էր համարվում ոչ պակաս, քան թե Խուստուփի քարայրի ջուրը։ Ինչպես այլ խաչերի մոտ ուխտի օրը, այստեղ էլ այդ օրը երևան էին գալիս միրգ ու վարունգ ծախողներ, աշուղներ, լարախաղացներ։ Երիտասարդները ճօնջի՝ ճլորթի էին ածում, պարում էին։

Վարդավառի օրը հավատացյալները մեծ բազմությամբ գիմում էին սրբազան լեռների գագաթներին գտնված սրբավայրերի այցելության։ Այնտեղ գտնվում էին հրաշագործ գերեզմաններ՝ որևէ պարզ խաչքարով զարդարված կամ շատ նոր ժամանակներում շինված անարվեստ մատուռով հովանավորված։ Բարձրանում էին Սարվարդի (Սալվարդի), Իշխանասարի (Իշխիլի) սուրբ Օհաննեսը և մանավանդ Խուստուփի գագաթները։ Հազիվ թե կարելի լինի երկբայել, որ ոչ թե այդտեղ իբր թե թաղված սուրբերի գերեզմաններն էին, որ գրավում էին ուխտավորներին, ինչպես և կասկածելի է նույնիսկ, թե այդ քարակույտերը թաղումների հետքեր են և ոչ թե ուշ ժամանակներում հավաքած քարերի կույտեր, այլ այդ գագաթները նվիրական էին քրիստոնեության նախորդող վաղեմի դարերից սկսած և շաղկապված էին արևի պաշտամունքի հետ և ոչ մի կապ չունեին Քրիստոսի պայծառակերպության ավանդության հետ։ Վերջինը նույնիսկ Ավետարանի մեջ համարվում է ուշ ժամանակների ներմուծում։ Հենց ինքն այդ ավանդությունը հավանական է հնարվել է բացատրելու համար լեռների գագաթների հեթանոսական պաշտամունքը, որը քրիստոնեության հաստատվելուց հետո էլ անխախտ մնում էր իր նախկին ուժի մեջ՝ մանավանդ Փոքր Ասիայի մի շարք շրջաններում։ Ամառային արևադարձի օրերի հետ զուգորդված այդ տոնակատարությունը հետևագույն մնացորդ է այն պաշտամունքի, որն, ինչպես ամբողջ Հայկական լեռնաշխարհում, նույնպես և Զանգեզուրում պահպանվել է Վարդավառի տոնին լեռները բարձրանալու և այնտեղ առատ մատաղ բերելու կամ այս ու այն խաչի մոտ ընդհանուր հացկերույթների նստելու սովորությունների հետ։ Քննելով մի այլ տեղ Վարդան, Վարդ և Վահան հատուկ անունների ծագումը, ես մատնացույց էի

---

[50] Զօրէիդոնի եկեղեցին կազմված է իրար կպած երկու շենքից. առաջին դռնով մտնում էին և չորրորդով դուրս գալիս։ Ամեն մի տաճարում կար սուրբ սեղան, որտեղ մոմեր էին վառում։ Առաջին եկեղեցին մտնում էին շոքեշոք, մոմ վառելուց հետո վեր էին կենում, անցնում մյուս եկեղեցին։ Այնտեղ մոմ վառելուց հետո դուրս էին գալիս մեջքով, ետ-ետ քաշվելով։ Եկեղեցու մոտ կա մի աղբյուր, որը ոչ երաշտի ժամանակ է քչանում, ոչ էլ հորդ անձրևների ժամանակ ավելանում։ Դրա ջուրը սուրբ էր համարվում։ Ասում էին, որ մի վարդապետ, տեսնելով, որ վանքի մոտ ջուր չկա՝ իր գավազանին կրծքով հենվել էր, գավազանը խրվել է գետնի մեջ և գոյացած ծակով ջուրը բխել է այդ գավազանի հաստությամբ։